ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4360-Ա «08» նոյեմբերի 2024թ.

ՄԱՆՅԱ ՍԱՇԱՅԻ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ԳԱԼԻՆԱ ՍՏԱՐՈՎՈՅՏՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ Հ.177 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 3-րդ մասի 1-ին կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով «Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան հ. 177 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 69-րդ կետը, Երևանի քաղաքապետի 2024 թվականի հոկտեմբերի 25-ի հ.Ն/63001-24 ծանուցումը, ինչպես նաև Մանյա Առուստամյանի հետ 2019 թվականի նոյեմբերի 7-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-րդ կետի «ա» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-րդ կետը՝

1. Մանյա Սաշայի Առուստամյանին՝ 2024 թվականի նոյեմբերի 8-ից ազատել «Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան հ.177 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2019 թվականի նոյեմբերի 7-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան հ. 177 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության ուսումնական գծով տնօրենի տեղակալ Էվելինա Մանգասարյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ